ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

15 հունվարի 2021 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 (վեց) անդամներ:
Բացակա էին Գեորգի Աղաջանյանը, Հայկազ Բաղդասարյանը, Արգամ Շառյանը, Վարդան Սուքիասյանը և Հայկ Վարդևանյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը և աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են վեցը քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ *ավագանին որոշում է.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N 60-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

3. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և նախագծման թույլտվություն տալու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 01-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 60-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի՝ ըստ հատվածների, որից՝

եկամուտների գծով՝ 443 454.0 հազար դրամ

ծախսերի գծով՝ 466 444.3 հազար դրամ

դեֆիցիտը (պակասուրդը)՝ 22 990.3 հազար դրամ

1) համայնքի բյուջեի եկամուտները՝ հատված 1.

2)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ հատված 2.

3)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3.

4)համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ հատված 4.

5)համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ հատված 5.

6)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6:»

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 02-Ն/

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ *ավագանին որոշում է.*

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 03-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Մարիետա Գևորգի Հովհաննիսյանի հայտը՝ ***ավագանին որոշում է.***

1.Մարիետա Գևորգի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի 07-055-0212-0145 ծածկագրով (վկայական N 22122020-07-0069) 0.09 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական

օբյեկտների, գյուղատնտեսական մթերքի (պտուղ-բանջարեղենի) սառնարան-պահեստ (կենցաղային մասով) կառուցելու նպատակով:

2.Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ձրաբեր գյուղի 07-055-0212-0145 ծածկագրով (վկայական N 22122020-07-0069) 0.09 հեկտար մակերեսով հողամասում գյուղատնտեսական մթերքի (պտուղ-բանջարեղենի) սառնարան-պահեստ (կենցաղային մասով) կառուցելու նպատակով օրենքով սահմանված կարգով Մարիետա Գևորգի Հովհաննիսյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

3.Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 04- Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ _____

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆ _____

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ